<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հնարավոր

մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք/ներ/:

Սույն հրավերի /ծանուցման/ ծածկագիր է հանդիսանում <<ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Զ. Անդրանիկ 2 հասցեով, մինչև սույն թվականի հունվարի 29- ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կարինե Հովսեփյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության շենքում Զ. Անդրանիկի 2 հասցեում, 302 սենյակում, սույն թվականի հունվարի 29-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի ձեռքբերումը:

<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության կարիքների համար դեղորայքի մատակարարման /որոնք կազմված են 145 չափաբաժիններից/ տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը:

Դեղերի փոխադրման պայմանները.

1. Դեղերը փոխադրվում են միայն տրանսպորտային փակ միջոցներով՝ հաշվի առնելով տվյալ արտադրանքի համար սահմանված գործարանային պահման պայմանները: Տրանսպորտային միջոցը պետք է ապահովված լինի դեղերի պահպանման պայմանների համար համապատասխան միջոցներով:

*2. Տրանսպորտային միջոցում արտադրանքը պետք է դասավորված լինի խնամքով՝ խմբային տարաներում՝ արանքում չթողնելով դատարկ տարածքներ:*

*3. Ջերմաստիճանային ռեժիմի տատանումների նկատմամբ զգայուն դեղերը տեղափոխելիս պետք է ապահովվել ինդիկատորով ջերմամեկուսիչ փաթեթավորում՝ մինչև բաշխման առաջնային օղակին հասնելը:*

*4. Դեղերի փոխադրման տարայի վրա նշվում է՝*

- *արտադրանքի անվանումը,*
- *արտադրանքի քանակը,*
- *խմբաքանակի համարը,*
- *պիտանիության ժամկետը,*
- *անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մակագրությունները՝*

*<<Չսառեցնել>>, <<Պահել 2-8$^0$C-ում>>, <<Շուտ փչացող արտադրանք>> և այլն:*

*5. Ուղարկողը նախապես պետք է տեղեկացնի բեռը ուղարկելու մասին՝ ներառյալ երթուղին, բեռի ընդհանուր քանակը և անվանումը, ժամանման պահը, անհրաժեշտության դեպքում՝ ցուցումներ <<սառցե շղթայի>> պահպանման վերաբերյալ:*

*6. Դեղորայքը պետք է առաքվի պատվերն ընդունելուց մեկ-երկու օրվա ընթացքում:*

*7. Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսեր:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում /Հավելված N5/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,*

*բ. գնային առաջարկ /Հավելված 5.1/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և՝ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

*Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՄՊ09-ՇՀԱՊՁԲ-16/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով :*

*Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:*

*<<Թիվ 9 մանկական պոլիկլինիկա>> ՓԲ ընկերության էլեկտրոնային փոստի հասցեն է mp09@mail.ru:*

*Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման ը/կամ գնահատման համար պետք է*

պատվիրատուին ներկայացնի այլ /լրացուցիչ/ փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով /ծանուցումով/՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան /կոնկրետ/ դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Ե. Մ. Սարգսյան